

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ «АРМЯНСКИЙ ВЕСТНИК» ԵՎ
«АРМЯНЕ И ВОЙНА» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

Պատմ. գիտ. դոկտոր Ն. Բ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

«Ռուսատյաց, թուրքոֆիլ և արևմտյան կողմնորոշում ունեցող հեղինակները զարմանալիորեն անտեսում, «մոռանում» են փաստերը...: Ինչո՞ւ չհիշել այն փաստը, որ միայն 1916 թ. ռուսական կառավարությունը արևմտահայ գաղթականությանը օգնելու համար տրամադրել է 250 միլիոն ռուբլի (ոսկով): Հայ գաղթականությանը ո՞վ պատասխարեց Հյուսիսային Կովկասում, Սևծովյան քաղաքներում ու Ռուսաստանի այլ վայրերում: Մի՞թե հայտնի չէ, որ Կովկասյան ֆրոնտում քաջաբար կովոդոտու զինվորներն ու կոզակները փրկեցին հազարավոր հայ որբ երեխաներ... Այս մասին շատ կարևոր նյութեր են տպագրվել «Արմյանսկի վեստնիկ»,... «Արմյանե ի վոյնա» և այլ պարբերականներում»:*

Ա.կադեմիկոս Մկրտիչ Ներսիսյան

Առաջին համաշխարհային պատերազմի իրադարձությունները, Թուրքիայում հայերի զանգվածային ցեղասպանությունը և Արևմտյան Հայաստանի հայաթափումը, արևմտահայերի սփռվելն աշխարհով մեկ, մեծ տերությունների քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, պատերազմի տարիներին հայ փախստականներին օգնելու, Ռուսաստանի հասարակայնությունը հայերի կրած տառապանքներին իրազեկ պահելու և այլ-

* Մ. Գ. Ն եր ս ի ս յ ա ն. Արևմտահայերի 1915-1916 թթ. ցեղասպանության մի քանի հարցերի մասին. – «Պատմա-բանասիրական հանդես», 1995, N 2, էջ 18: Այսօր, որպես մեծագույն հարգանքի տուրք, պարտավոր ենք նշել, որ, իրոք, հայ-ռուսական հարաբերությունների, Հայկական Հարցի, Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրման գործում աննախընթաց և անանց են Հայրենասեր գիտնականի ծառայությունները: Հատկանշական է, որ Ներսիսյանը ոչ միայն սկզբունքային գիտնական էր, այլև՝ կազմակերպիչ: Բոլոր սերունդների գիտնականները սիրով էին կատարում նրա ստեղծարար հանձնարարականները: Վերոհիշյալ վերնագրով մեր այս հոգվածը պրպտող ու մտորող գիտնականի, գիտնական-խմբագրի վերջին հանձնարարականներից է:

այլ հարցերի լուսաբանման նպատակով է ձեռնարկվել «Армянский вестник» շաբաթաթերթի և «Армяне и воина» ամսագրի հրատարակումը:

Համաշխարհային պատերազմը մեկ անգամ ևս ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը սեռեց թուրքիայում ոչնչացվող Հայ ժողովրդի վրա, ասվում էր «Армянский вестник» շաբաթաթերթի առաջին համարի՝ 1916 թ. հունվարի 31-ի առաջնորդողում: Ընդգծելով, որ «փոքրիկ այդ ժողովրդի տառապանքները» առաջ են բերել նրա նկատմամբ ամբողջ աշխարհի, այդ թվում նաև Ռուսաստանի կարեկցությունը, պարբերականը միաժամանակ գտնում էր, որ ռուս հասարակության լայն զանգվածները շատ քիչ են ծանոթ Հայերին, նրանց պատմությանն ու մշակույթին, և Ռուսաստանում չկա ռուսերեն լեզվով մի պարբերական, որը լուսաբաներ Հայ հասարակական-քաղաքական և ազգային կյանքը, արտահայտեր նրա կարիքներն ու պահանջները: Նման կարգի հրատարակության պահանջը, անկասկած, շատ վաղուց էր զգացվում, բայց այն երբեք այնպիսի անհրաժեշտություն չի եղել, ինչպես ներկայումս: Շարունակվող պատերազմում ռուս հասարակությունը ինչքան մոտիկից ծանոթ լինի Հայերին, այնքան արդարացիորեն կդրսևորվի նրա վերաբերմունքը բազմաչարչար թուրքահայերի ճակատագրի նկատմամբ:

Հայաստանի ապագայի հարցի լուծման գործում կարևոր է ռուս հասարակության մասնակցությունը: «Армянский вестник»-ը ծնվել է պատերազմից և այն հսկայական տառապանքներից, որ պատերազմը բերել է Հայերին: Այնպիսի մի պարբերական, ինչպիսին մերն է, այնուհետև շարունակում է առաջնորդողը, վաղուց պետք է տեղ գտնեն ռուսական պարբերականների շարքում:

Չէ՞ որ ո՛չ ռուս հասարակությունը, ո՛չ էլ ռուսական կառավարությունը մինչև այժմ անհրաժեշտ լրիվությունը լավատեղյակ չեն Ռուսաստանում և թուրքիայում ապրող Հայերի տրամադրություններին և ձգտումներին¹:

Համարյա նույն խնդիրներին էին հետամուտ նաև «Армяне и воина» հասարակական-քաղաքական և գրական ամսագրի հրատարակիչները: Ամսագիրը լույս է տեսել 1916 թ. մարտից մինչև 1917 թ. փետրվարը, Օդեսայում, ընդամենը 12 համար: Պարբերականի գլխավոր և հիմնական նսլատակը, ամսագրի առաջին համարի առաջնորդողը դրել է խմբագիր-հրատարակիչ Ա. Հունանովը, Հայ և ռուս մտավորականությունը Հայկական իրականության հետ լայնորեն ծանոթացնելն է: Այն ռուս մտավորականության համար կլինի պատերազմում Ռուսաստանի ամենահավատարիմ և ամենահերոսական ղաշնակիցներից մեկի մասնակցության մասին փաստերի հետաքրքիր ժողովածու, իսկ Հայ մտավորականության համար՝ պատե-

1 Տե՛ս Армянский вестник, 1916, N 1, с. 1-2.

րազմի հուշատետր, պատերազմ, որի մարտադաշտերում առատորեն նաև Հայկական արյունն է թափվել²:

Հայկական և ռուսական մամուլի, մշակույթի նոր և նորագույն սլատմության մեջ գյուրին չէ գերազնահատել ռուսալեզու այդ երկու պարբերականների իրազացած դերը:

«Армянский вестник» Հասարակական-քաղաքական, գրական պատկերազարդ շաբաթաթերթի հրատարակիչ-խմբագիրը Իվան Ամիրովն էր, որի հետ սերտորեն գործակցել և հետագայում շաբաթաթերթը փաստորեն խմբագրել է Ալեքսեյ Զիվելեգովը: Թերթը հրատարակվել է Մոսկվայում 1916 թ. հունվարից մինչև 1918 թ. ապրիլը: Շաբաթաթերթը հրապարակել է լրագրական ամենատարբեր ժանրերի նյութեր՝ առաջնորդողներ, պատմահրապարակախոսական հոդվածներ, ղեղարվեստական ստեղծագործություններ, ամենատարատեսակ թղթակցություններ, պաշտոնական նյութեր, նամակներ, ռազմաճակատային լուրեր: Շաբաթաթերթն ունեցել է մշտական՝ «Պատերազմը Թուրքիայի հետ», «Հայկական կյանքի ժամանակագրություն», «Եվրոպան և Հայերը», «Հայկական գաղթավայրերը», «Փախստականներ», «Հայկական կյանքի խրոնիկա», «Հին Հայկական հուշարձանները», «Մամուլի տեսություն», «Թատրոն և արվեստ» բաժինները: «Հատուկ հաղորդագրություն Գերագույն Գլխավոր հրամանատարություն շտաբից» խորագրի ներքո շաբաթաթերթը յուրաքանչյուր համարում տպագրել է պատերազմական գործողությունների ամփոփագիրը:

Պարբերականում ուղագրավ ուսումնասիրություններով, արժեքավոր հրապարակախոսական հոդվածներով, բազմաժանր ղեղարվեստական գործերով հանգես են եկել Հայ և ռուս հասարակայնության ժամանակի հայտնի ներկայացուցիչներ Լեոն, Տ. Հախումյանը, Ալ. Զիվելեգովը, Գևորգ Չուբարը, Ա-Դոն, Մ. Վարանգյանը, Վ. Տոտեմյանցը, Խ. Քուլչուկ-Հովհաննիսյանը, Գր. Չալխուշյանը, Փ. Թերլեմեզյանը, Վ. Բրյուսովը, Ս. Գորոզեցկին, Վ. Նեմիրովիչ-Դանչենկոն, Յու. Վեսելովսկին, Ս. Կոտլյարևսկին, Պ. Դոլգորուկովը, Ն. Նիկոլաևը և շատ ուրիշներ, որոնք լուսաբանել են Հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքը, բացահայտել Արևմտյան Հայաստանում թուրքական կառավարության քաղաքականության հակահայկական-ջարգարարական բնույթը, անդրադարձել արևմտահայության բռնագաղթի գործում իմպերիալիստական Գերմանիայի խաղացած դերին, փախստականների դժոխային կացությունը: «Армянский вестник» շաբաթաթերթը և «Армяне и война» ամսագիրը տարբեր բնույթի նյութեր էին հրապարակում Հայկական զանգվածային կոտորածների և դրանք դատապարտող համաշխարհային հասարակայնության արձագանքների մասին, պարբերաբար անդրադառնում Հայկական հարցի պատմությունը, ռուսական կովկասյան բանակի ռազմավարական ու մարտավարական կարևոր

2 Տե՛ս Армяне и война, 1916, N 1, с. 1-2.

գործողություններին, Հայկական կամավորական շարժմանը, Հայերի ազգային ինքնորոշման խնդիրներին: «Армяне и воїна» ամսագրի խմբագրության վարիչը և փաստացի խմբագիրը Հայ հասարակական գործիչ և հրապարակախոս Ս. Գազիևն էր, որը հաճախակի հանդես էր գալիս արդիական հնչեղություն ունեցող հոդվածներով: Նա այստեղ, ըստ էության, կատարում էր նույն գեբը, ինչ որ «Армянский вестник»-ում Ալ. Զիվելեգովը: Հարավային Ռուսաստանում և կայսրության տարբեր քաղաքներում այդ պարբերականն ուներ 2000 բաժանորդ: Ամսագրի աշխատանքներին մասնակցում էին Հայ և ռուս հայտնի գործիչներ, գրականագետներ, գրողներ, պատմաբաններ, լրագրողներ՝ Ա. Հունանովը, Ալ. Զիվելեգովը, Մ. Բերբերյանը, Մ. Շահինյանը, Գր. Չախուշյանը, Ա. Մատուրյանը, Յու. Վեսելովսկին, Ա. Գորոզեցկին, Ա. Գազիևը, Մ. Կովալևսկին, Արմեն Գարոն (Թուրքական պառլամենտի նախկին անդամ), Վ. Փափազյանը, Զ. Շիշմարևը, Ռուսաստանի պետական դոկտայի դեպուտատներ Մ. Պապաջանովը և Աճեմովը (սրանք հանդես էին գալիս նաև «Армянский вестник»-ում), Ն. Նիկոլաևը, գորավար Անդրանիկը, Գ. Խատիսովը, Ա. Մերեժինը և շատ ուրիշներ: Ամսագրի ուղադրության կենտրոնում են եղել պատերազմող խմբավորումների քաղաքականության, ռազմական դործողությունների, Հայ գաղթականների վիճակի, հատկապես տեղավորման ընթացքի հարցերը, բոլոր այն խնդիրները, ինչի մասին դրում էր «Армянский вестник»-ը:

Հանդեսն ուներ Հայ կամավորներ, Հայ գաղթականներ, Հայկական կոմիտեներ, ռազմական տեսություններ Կովկասյան ռազմաճակատից, Հայերն արտասահմանում, մամուլի տեսություն բաժիններ: «Армяне и воїна» ամսագիրը հատկապես շատ էր դրում ընթացիկ պահի Հայ-ռուսական, Հայ-վրացական հարաբերությունների, շարունակվող պատերազմում վերստին կրկնվող սարսափների, բնավեր ու տանջահար գաղթականների, ինքնապաշտպանական կոմիտեների մասին: Նույն մոտիվներով «Армянский вестник» շաբաթաթերթում հոդվածներով և ակնարկներով պարբերաբար հանդես էին գալիս Գեորգ Չուբարը, Ա-Դոն, Ա. Վրացյանը, Փ. Թերլեմեզյանը և ուրիշներ: Հայ արձակագիրներից շաբաթաթերթում առավել շատ տպագրվողներից էր Ավետիս Ահարոնյանը («Խավարում», 1916, N 5-9, «Զինվորի առաջին տարին», «Ամբոխը», 1916, N 11 և այլն): Հարկավ, Ռուսաստանի հարավում, Օդեսայում հրատարակվող ամսագիրը չէր կարող ունենալ Մոսկվայում լույս տեսնող շաբաթաթերթի հաջողությունը, նրա հեղինակային կոլեկտիվը անհամեմատ փոքր էր: Այդ է պատճառը, որ «Армяне и воїна» ամսագրի խմբագրությունը հաճախ Հայ կյանքի վերաբերյալ և պատերազմի ճակատներից նյութեր էր արտատպում «Армянский вестник»-ից, այլ պարբերականներից: Դրանք, պակաս կարևոր չէին: Արևմտահայերի տեղահանության և զանգվածային կոտորածների մասին, փախստականների կյանքի վերաբերյալ հեղինակավոր հրատարակություններից վերցված ռուս աստիճանավորների, հրապարակախոս-

ների, լրագրող թղթակիցների նյութերում բացահայտվում-լուսարանվում էին Հայկական հարցում տերութունների դիրքորոշումը, ինքնապաշտպանական կոնիվները, ջարդերը, փախստականների վիճակը և այլն:

Երկու պարբերականներում տպագրված նյութերում պատմվում է նաև այն մասին, որ Թուրքիայում գերմանական սպանների մեծամասնութունը խրախուսել և անձամբ մասնակցել է ջարդերի կազմակերպմանն ու իրականացմանը: Բերված են փաստեր, թե ինչպես գերմանական բազմաթիվ սպաններ գործուն մասնակցութուն են ունեցել Թուրք ջարդարարների վայրագութուններին:

«Армянскунъ вестник»-ում պատմաբան, արվեստաբան և հրապարակախոս Ալ. Ջիվելեգովը գրում էր, որ Չինգիզ խանի, Թամերլանի ժամանակներում և այդ ժամանակներից ի վեր Հայերը չեն ապրել նման սարսափներ: Նոր ժամանակների Թուրք խավարամուլները Հայերի համատարած ոչնչացմանը մասնակից գարձրին «քաղաքակրթված» Գերմանիային, որը որպես հավատարիմ գինակից ոչինչ չէր խնայում Արևմտյան Հայաստանը Հայերից մաքրելու և պանթուրանական ծրագրերի իրականացման համար: Այս իրողութուն հաշվառմամբ է, որ «Армянскунъ вестник»-ը ճիշտ էր համարում և պաշտպանում պատերազմը մինչև հաղթական ավարտին հասցնելու տեսակետը, կարծելով, որ Գերմանիայի լիակատար ջախջախմամբ կվերջանար նաև շովինիստ երիտթուրքերի մեծապետականութուն մոլուցքը³: Շարաթաթերթը Հայ և ռուս վառ և կրակոտ հրապարակախոսների ձիրքը ի սպաս դրեց Հայկական հարցի շուրջը նպաստավոր հասարակական կարծիքի մշակման ուղղութումբ: Հեղինակների մի խումբ (Լեո, Ջիվելեգով, Չախուլջան, Պ. Դուգորուկով, Ն. Նիկոլաև և ուրիշներ) մշտապես, առանց ընդհատումների լուսարանում էր երիտթուրքերի գաղափարախոսութունն ու քաղաքականութունը, խորապես թափանցում Հայ ժողովրդի նկատմամբ մարդատյաց երիտթուրքերի քաղաքականութունից խոթյան մեջ, անդադար հետևում Հայկական հարցում Թուրքական պետականութունի գլխավոր ուղենիշներին՝ սկսած արգուհամիգյան «գուլումի» ժամանակներից մինչև Մեծ Եղեռնը: Լեոն շաբաթաթերթի 1916 թ. բազմաթիվ համարներում, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի 40-ամյակի առթիվ տպագրված «Թուրքիայում Հայկական հարցի պատմութունից»⁴ պատմագիտական ակնարկներում ընթերցողին հիշեցնում էր Բեուլինի կոնգրեսում Բիքոնսֆիլդի և Բիսմարկի խաղացած ստոր դերի մասին, նաև այն մասին, որ սուլթանը սկսել էր վրեժ լուծել Հայերից ռուսներին ցույց տրված աջակցութունի համար՝ կազմակերպելով նոր ջարդեր և Հայերի 1890-ական թթ. գանգվածային կոտորածները: Ըստ պարբերականի, անհնար էր վերջ տալ Թուրքական վայրագութուններին՝ հուսալով պաշտոնա-

3 Տե՛ս А л. Д ж и в е л е г о в. Судьба Армении.-Армянский вестник, 1916, N 1, с. 5.

4 Տե՛ս Армянский вестник, 1916, N 29, 30, 44, 47:

կան Եվրոպայի համակրանքն ու աջակցությունը: Չէ՞ որ սուլթանը շատ լավ գիտեր, որ Առաջավոր Ասիայի լեռներում ցանուցիր, մի բուռ ժողովրդին կարեկցելու համար Եվրոպան իրեն տհաճություններ չի պատճառի, քանի որ ոչ թե նույնադավան ժողովրդի նկատմամբ կարեկցությունն է որոշում Եվրոպայի վերաբերմունքը, այլ օգուտը, շահը: Այս մասին Ալ. Ջիվելեզովը դրել էր տակավին 1911 թ.⁵: Շաբաթաթերթի փաստացի խմբագիր Ալ. Ջիվելեզովը ավելորդ լավատեսությունը համոզված էր, որ Առաջին աշխարհամարտի արդյունքներով կլուծվեն բոլոր այն հարցերը, որոնք տեղ են գտել 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի մեջ: Նրա լավատեսությունը խարսխվում էր այն խաբուսիկ իրատեսության վրա, ըստ որի Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի պարտությունից և հաղթողների ողորմածությունը հանձնվելուց հետո, Օսմանյան կայսրության տարածքի վրա ստեղծվելիք ինքնավար մյուս կազմավորումների շարքում իր տեղը կունենա նաև Հայաստանի ինքնավարությունը: Տարաբախտաբար պատմությունը հակառակ գնաց այդ լավատեսությանը:

Այսօր էլ խիստ արդիական են «Армянский вестник»-ում տպագրված Ալ. Ջիվելեզովի «Նեոթուրանիզմը և Հայաստանը» և Ն. Նիկոլևի «Երիտթուրքերի քաղաքականության ճգնաժամը և նեոթուրանիզմը» հոդվածները:

«Նեոթուրանիզմը որպես քաղաքական գաղափար, — կարդում ենք «Նեոթուրանիզմը և Հայաստանը» հոդվածում, — իր առաջ նպատակ ունի սերտ դաշինք ստեղծել բոլոր թուրքական ցեղերի միջև՝ առանց հավատի և լեզվի տարբերության, իսկ որպես ազգային գաղափար պետք է ձգտի թուրանական ծագման բոլոր թուրքական ցեղերի ազգային-մշակութային սերտ միավորման: Դա կհանդիսանա առաջին պայմանը քաղաքական միավորման այս կամ այն ձևի մեջ»⁶: Պանթուրանիզմի ծրագրի ուսումնասիրությունը պարբերականին բերում է այն եզրակացության, որ Բարձր Դուան բոլոր հարաբերությունները Հայ ժողովրդի հետ, նրա բոլոր միջոցառումները Փոքր Ասիայի հայկական երկրամասերում XIX դարի սկզբից մինչև Առաջին աշխարհամարտը հանգել են մի նպատակի՝ մեթոդաբար կյանքում իրագործել Հայ ժողովրդի ոչնչացման կանխորոշված նախագիծը, մի «անհանգիստ ժողովուրդ», որն իր գոյությունը քաղաքական մղձավանջ է դարձել «քաղաքակրթվող» թուրք կառավարողների համար, որովհետև Հայաստանն ու Կիլիկիան իրենց աշխարհագրական գիրքով խիստ տարանջատում էին թուրքական Անատոլիան մուսուլմանական Միջագետքից և Իրանից...⁷:

5 Տե՛ս Ա. Լ. Դ Ջ ի Վ Ե Լ Ե Ղ Վ. Будущее Армении. М., 1911, с. 10:

6 Ա. Լ. Դ Ջ ի Վ Ե Լ Ե Ղ Վ. Неотуранизм и Армения -Армянский вестник, 1916, N 41, с. 2-3.

7 Նույն տեղում:

Պարբերականի այս ընդհանրացնող եզրակացությունը համահունչ էր 1890-ական թթ. Թուրքիայում ֆրանսիական դեսպանի Փարիզ ուղարկած հեռագրից մեջ բերված հետևյալ խոսքերի հետ. «Թուրքիան նպատակ ունի բնաջնջել Հայաստանը Կիլիկիայի հետ, որը սուր կերպով սեպի նման խրվել է մուսուլմանական արևելքի հենց սրտում»⁸: «Երիտթուրքերի քաղաքականությունից ճշմարտացի և «Նեոթուրանիզմը» հողվածի հեղինակ Ն. Նիկոլանը հենվելով Սալոնիկի երիտթուրքական կոնգրեսի նյութերի, «Рев» և այլ թերթերի հրատարակումների վրա, գատապարտում է երիտթուրքերի ծրագրերի զավթողական նկրտումները: «Նեոթուրանիզմի գաղափարը վաղ թե ուշ, – գրում է հեղինակը,– մեծ կամ փոքր չափով պետք է գառնա Ռուսաստանի քաղաքական և պետական շահերի համար սպառնալիք, և պետք է ժամանակին ընդունել այնպիսի միջոցառումներ, որոնք ուժ ունենան վնասագերծելու մեզ համար վտանգավոր պանթուրանական շարժումը...»⁹:

«Վերջապես եկավ վաղուց սպասված հեղափոխությունը... Ռուսաստանն այս օրերին ապրում է առանց ցարի, ազատ և ուրախ շնչում է ազատության օդը և կռում է իր ապագան», – այսպիսի խոսքերով «Армянские вестники»-ը գիմավորեց Փետրվարյան հեղափոխությունը: Պարբերականը հույս ուներ, որ «նորոգ» Ռուսաստանում պետք է մաքրվեն գարշելի գրպարտության, անբարյացակամ չարակամության, շովինիստական նախապաշարումների կուտակված կեղտերը և կճանաչվի Հայ ժողովրդի ինքնավարությունը Թուրքիայում: Այդ նպատակի իրագործման համար շաբաթաթերթն անհրաժեշտ էր համարում առաջին հերթին հանել բոլոր այն սահմանափակումները, որոնք գծվարացնում էին թուրքահայ գաղթականների վերագարձը ռուսական զորքերի կողմից ազատագրված իրենց հայրենիքը, քննադատում էր ժամանակավոր կառավարության և նրա արտաքին գործերի նախարարության «տարօրինակ տատանումները» Հայկական հարցում, որը շարաթաթերթը կապում էր ցարական արտաքին գործերի նախարար Սազոնովի «պատշաճ ուղի» չգտնելու հակահայկական քաղաքականության հետ: Նշելով, որ դեմոկրատական Ռուսաստանը լուծել է «լեհական հարցը», պարբերականը գտնում էր, որ ռուս ժողովրդի պարտքը և ռուսական դեմոկրատիայի արժանապատվությունը հրամայաբար պահանջում են, որպեսզի Հայաստանը դառնա Ռուսաստանի Հանրապետության արտաքին գործերի մինիստրության ուղադրության առարկան¹⁰: Պարբերականը իրավունք ուներ հարցին այդպես մոտենալու, որովհետև տակավին 1916 թ. փետրվարին Ալ. Ջիվելեզովի հրատարակած «Տրեսլովի հայտարարությունը նեղուցների մասին և Հայկական հարցը» հողվածում պատե-

8 Նույն տեղում:

9 Армянский вестник, 1917, N 4, с. 24.

10 Տե՛ս նույն տեղում, N 43-44, с. 4-5.

բազմում հաղթող պետություններից պահանջում էր Թուրքիայից անջատել Միջագետքը, Արարիան, Սիրիան, Հայաստանը, Կիլիկիան, Լադիստանը և փոքրասիական ծովեզրի արևմտյան ափը: Որովհետև եվրոպական հաղթող պետություններին հազիվ թե հաջողվի Թուրքիան ենթարկել այնպիսի բաժանման, որ նա գազարի որպես պետություն գոյություն ունենալուց, ուստի վերոհիշյալ կոմբինացիան հեղինակին հարմար էր թվում գալիք Հայաստանի համար, քանի որ գրանից հետո Արևմտյան Անատոլիայում 7-8 միլիոն թուրքերով բնակեցված Թուրքիան վտանգ չի ներկայացնի հարևանների համար և՛ այժմ, և՛ ապագայում¹¹: Պարբերականը հասու էր այն իրողությունը, որ Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու ոչ մի նպատակ չուներ, նա շարունակում էր ցարիզմի միակցման քաղաքականությունը: «Армянскому вестнику»-ի շուրջը խմբված հայ և ռուս մտավորականների շրջանում տակավին չէր բյուրեղացել այն ճշմարտությունը, որ Փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական բուրժուազիայի ցանկությունն էր՝ շարունակել և բաղձալի հաղթական ավարտին հասցնել պատերազմը: Չնայած իր գոյությունը ընթացքում ժամանակավոր կառավարությունը երբեք չի ակնարկել Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին միակցելու ցարիզմի քաղաքականությունից որևէ շեղում, ընդհակառակն, իր արտաքին գործերի մինիստր Պ. Միլյուկովի բերանով բազմիցս ընդգծել էր հավատարմությունը ցարիզմի քաղաքական ընթացքին, սակայն, միևնույն է, հայ պարբերականի առաջատար հրատարակախոս Ալ. Զիվելեզովը շարունակում էր հուսադրել իր ընթերցողներին, թե Թուրքահայաստանի լիակատար ինքնավարությունը Հայկական հարցի միակ հնարավոր լուծումն է: Ընդ որում, քանի որ ինքնավար Հայաստանը չի կարող գոյատևել առանց Ռուսաստանի, այդ իսկ պատճառով Հայաստանի ինքնուրույնության հարատևման երաշխիքը տեսնում էր Ռուսաստանի Հանրապետության հովանավորության ներքո և ինքնավար Հայաստանի մանդատը հանձնում էր Ռուսաստանին¹²:

Հրատարակախոսը գրական է արտահայտվել նաև «Թուրքահայաստանի մասին» գեկրետի առիթով, հուսալով, որ «Ռուսաստանի օգնությունը կարող է արտահայտվել միայն նրանում, որ Հայաստանում կթողնվի ռուսական բանակի գոնե մի մասը»¹³: Սթալի հայացքով քննելով անցյալի դասերը, պարբերականը վճռականությամբ հայտարարում էր՝ «Թուրքահայաստանը Թուրքիայից անջատել՝ նշանակում է ոչնչացումից փրկել հայերի մնացորդները և սկիզբ դնել երկրամասի խաղաղ զարգացմանը»¹⁴:

11 Տե՛ս նույն տեղում, 1916, N 44, c. 1-2.

12 Տե՛ս նույն տեղում, 1917, N 43-44, c. 4-5.

13 А л. Д ж и в е л е г о в. Советский декрет «О Турецкой Армении».-Армянский вестник, 1918, N 3, c. 2-3.

14 Նույն տեղում:

Ռուսաստանի օգնությունը օսմանյան լուծը թողնելու, Հայկական Հարցում մեծ տերությունների վարած քաղաքականության, պատերազմի ընթացքում արևմտահայերի ուսական կողմնորոշման, զանգվածային կոտորածների, հայ կամավորական շարժման, գաղթականության հարցերը համակողմանիորեն լուսաբանվել են «Армяне и война» ամսագրի բոլոր համարներում:

Մեծ հետաքրքրությունը են կարգացվում թուրքական պառլամենտի նախկին անդամ Վահան Փափաղյանի «Հայկական Հարցը և Օսմանյան կայսրությունը», Ա. Մերեթի «Բրիտան Հայկական Հարցի մասին», Դուխովի «Հայերը Թուրքիայում», Գր. Չալիուշյանի «Մ. Նալբանդյան» (մահվան 50-ամյակի առթիվ), «Հազիվ է նշմարվում լուսի ճառագայթը», Ն. Նիկոլաևի «Սպիտակ գիրքը» սև դործերի մասին», Գ. Խատիսովի «Հայ կամավորական շարժումը», Ֆ. Շիշմարևի «Գերմանական եղանակ՝ թուրքական կատարմամբ», Ս. Գազիևի «Հայաստանի վերականգնումը», «Ամոքիչ արցունքներ», Միրզորոզեցի «Թուրքական բանակի երրորդ ջախջախումը», Մ. Բերբերյանի և այլոց հրապարակախոսական հոդվածները: Վ. Փափաղյանի «Հայկական Հարցը և Օսմանյան կայսրությունը» իր տեսակի մեջ եղակի հոդված է. հեղինակը պատմում է Հաջի Բեյի հետ իր տեական խոսակցություն-բանակցության մասին, այն մասին, թե ինչպես երիտթուրքական քաղաքական հանձնակատար այդ դործիչը ամեն ջանք դործադրում էր համոզելու, որ Հայերը համադործակցեն թուրքերի հետ՝ ընդդեմ Ռուսաստանի¹⁵: «Հայկական կամավորական շարժումը» հոդվածում Գ. Խատիսովը ընթերցողին է ներկայացնում ուս-թուրքական բոլոր պատերազմներում հայ կամավորների ավանդը ուսական գործակալությունների կողմից հայ ժողովրդի ապահովման դործում:

Հեղինակը պատմական փաստերի առատ օգտագործմամբ հաստատում է, որ հայ ժողովուրդը իր նվիրվածությունը Ռուսաստանին արյամբ է դրոշմել ինչպես ընթացիկ, այնպես էլ անցյալի բոլոր պատերազմներում¹⁶: Խատիսովը մասնավորապես կարևորում է «հզոր կամքի տեր» ուս երկու ցարերի՝ Ալեքսանդր Առաջինի և Նիկոլայ Առաջինի համապատասխանաբար 1813 թ. սեպտեմբերի 15-ի և 1827 թ. փետրվարի 2-ի հրովարտակները, որոնք մեջ ուս նշանավոր ցարերը շնորհակալություն են հայտնում հայերին՝ ցույց տված օգնության և հավատարմության համար: Հիշատակվում է Կովկասի մասին գրած ուս պատմաբաններ Գլինկայի, Դուբրովինի, Պոտտոյի անունները, որոնք հավաստում են հայ ժողովրդի՝ Ռուսաստանին «անասելի նվիրվածության մասին»¹⁷:

15 Տե՛ս Армяне и война, 1916, N 4, с. 46-47:

16 Տե՛ս նույն տեղում, N 1, с. 3:

17 Նույն տեղում:

«Զրույց Մ. Պապաջանովի հետ» հրապարակումը հարուստ նյութեր է պարունակում պատերազմից տուժած հայ զանգվածների մասին: Վերջին Պետական դումայի ցրումից հետո, նախկին դումայի անդամ Պապաջանովը զբաղվում է պատերազմից տուժած հայ բնակչության դրուժյան ուսումնասիրությամբ, լինում է ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի նահանգներում և հսկայական նյութեր հավաքում իշխանություններին տրամադրելու համար: Ամսագրի թղթակցին տված պատասխանից պարզվում է, որ միայն Արևելյան Անդրկովկասում 1916 թ. վերջերին ապաստան գտած հայ փախստականների թիվը հասել էր 230–240 հազարի: Դրանք մեծ մասամբ աշխատանքի անընդունակ տարեց տղամարդիկ էին, կանայք ու երեխաներ: Պապաջանովի կարծիքով, այն գումարները, որ բաց են թողնվել գանձարանից փախստականների համար, ինչպես նաև այն օգնությունը, որ նրանք ստացել են Հայ բարեգործական կազմակերպություններից, կաթիլներ կլինեին ծովի մեջ, եթե չլինեին Անդրկովկասի հայ գյուղացիության օգնությունը, գյուղացիությունը, որի դրուժյունն էլ առանձնապես նախանձելի չէր: Երիտասարդ տղամարդկանց մի մասը մեկնել էր գործող բանակ, որպես կամավորներ: Կովկասում տիրող չափազանց թանկուժյան պայմաններում, փախստականներին տրվող 10-15 կոպեկ նպաստօրապահիկը, ըստ Պապաջանովի, խիստ անբավարար էր: Եվ դա այն դեպքում, երբ ապրուստը համեմատաբար էժան Կենտրոնական Ռուսաստանում, որտեղ արևմտյան ճակատից այստեղ էին տեղավորվում փախստականները, ստանում էին օրական 20 կոպեկ: Պապաջանովը իշխանություններին առաջարկում է հայ փախստականների օրապահիկը հասցնել 20 կոպեկի, հակառակ դեպքում թերանման և տիֆ հիվանդության տարածվածության պայմաններում, կկորցնենք ամբողջ Հարավային Ռուսաստանի դաղթականությունը¹⁸: Ամսագիրը պաշտոնական բնույթի ընդարձակ լրատվություն է տպագրել Պետական դումայի նիստերի մասին, տվել այդ նիստերում Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովի և Պետդումայի անդամ Պապաջանովի ելույթների համառոտ շարագրանքը, պատերազմի հետ կապված բազմաբնույթ նյութեր է արտատպել «Русские ведомости», «Русское слово», «Daily chronicle» հանդեսներից:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Մոսկվայի, Օդեսայի, Դոնի Ռոստովի, Վորոնեժի, Բեսարաբիայի, Աիմֆերոպոլի, Ռումինիայի և այլ հայաբնակ քաղաքների ու երկրամասերի Հայկական կոմիտեների գործունեության մասին նյութերը, որոնք ցույց են տալիս պատերազմի հենց սկզբից կազմակերպված Հայկական կոմիտեների ծավալած ազգանպաստ գործունեությունը: Մոսկվայի կոմիտեն, օրինակ, պատերազմի հենց առաջին օրերից Կովկաս էր ուղարկել մեծ քանակությամբ տաք հագուստ, ծխախոտ, դեղորայք՝ հայ վիրավոր կամավորներին բուժելու համար: Երբ

18 Տե՛ս նույն տեղում, 1916, N 9, էջ 18-19:

երևում են գաղթականների առաջին խմբերը, կոմիտեն, չհապաղելով, կազմակերպում է պարենային և գրամական անհրաժեշտ օգնություն:

Էջմիածնում, ուր կուտակվել էր գաղթականների գլխավոր գանգվածը, Մոսկվայի կոմիտեն, լիազոր Թագևոսյանի գլխավորությամբ, կազմակերպում է սնունդ բաժանող ութ կետ, որ օրական բաց էր թողնում 20 հազար ճաշաբաժին: Էջմիածնում կոմիտեն բացում է երկու ամբուլատորիա, 100 տեղանոց մանկական հիվանդանոց, սուր վարակիչ հիվանդանոցների համար 50 մահճակալ և 3 ապաստարան 300 մարդու համար¹⁹:

Որպես հասարակական-քաղաքական և գրական պարբերականներ, «Армянский вестник» շաբաթաթերթը և «Армяне и война» ամսագիրը իրենց էջերը լայնորեն տրամադրել են Հայ և ռուս գրողներին, նշանավոր գրականագետներին, կարևոր տեղ հատկացրել թարգմանություններին՝ ինչպես գասական, այնպես էլ՝ ժամանակակից գրականությունից:

Մոտիկից ծանոթանալով Հայ իրականությանը և խորապես վերապրելով նրա ոգբերությունը, ռուս գրողները, հանուն արդարության, բողոքի իրենց ձայնն են բարձրացրել, առավելագույնս նպաստել Հայկական հարցի և Մեծ Եղեռնի մասին ճշմարտության տարածմանը: Նրանց բոլոր ստեղծագործությունների միջով անցնում են ցավն ու անհանդստությունը Հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ և ձգտումը՝ Հայրենակիցների մեջ սեր և կարեկցանք արթնացնել նրա նկատմամբ: Ռուս նշանավոր գրականագետ և բանաստեղծ, հայագետ ու թարգմանիչ Յուրի Վեսելովսկին խորապես ցնցված էր Արևմտյան Հայաստանում իրականացվող թուրքերի Հայաստան քաղաքականությունից: Տակավին մինչև Հայոց Մեծ Եղեռնը, մարդկային վրդովմունքը թուրք ջարդարանների նկատմամբ արտահայտություն գտավ նրա «Հայերի դրությունը Թուրքիայում» (1895) և «Թուրքահայաստանի ողբերգությունը» (1915) ուսումնասիրություններում, որոնցում ըստ լայնքի ու խորքի ուսումնասիրվել և լուսաբանվել են Հայկական հարցի ծագումն ու պատմությունը, դրանց շուրջը ծավալված դիվանագիտական պայքարը: Մեծարժեք էր նաև, արդեն Մեծ Եղեռնի երկրորդ տարում գրված, գիտնական հրապարակախոսի «Ռուսական Հայաստանի արշալույսին» հոդվածաշարը²⁰:

«Տառապյալ երեխաներ» (Թուրք-Հայկական իրականության սարսափների աշխարհից) հրապարակախոսական հոդվածում Յուրի Վեսելովսկին բացահայտել է ցեղասպանության քաղաքականության զոհերի՝ Հայ երեխաների ողբերգությունը, մերկացրել է թուրքական դահլիճներին, որոնք պետական քաղաքականության մակարդակի էին բարձրացրել Հայ ժողովրդի բնաջնջումը և գործածությունից «Հայաստան» անվան արտաքսումը: Թուրքերն այդ ամենը կատարում էին պատերազմում «Հայերին վնասա-

19 Նույն տեղում:

20 Տե՛ս Армянский вестник, 1916, N 4, 5, 6:

գերծելու» կեղծապատիր կարգախոսի ներքո: «Այգ սովորական դարձած գրասենյակային կարծիքը, – գրել է Վեսելովսկին, – որին բազմիցս գիմել է թուրքիան հետքերը վերացնելու կամ ջրից չոր գուբա գալու համար, երբ նրան ըռնել են դատանության և անօրինության մեջ, իհարկե, շատ բացահայտ էր, և թուրք դիվանագետներին չհաջողվեց ոչ մեկին շփոթեցնել: Եվ որ «հեղափոխականներին» շարքերում, որոնց գեմ պայքարում էր թուրքական կառավարությունը, կային 10 տարեկանից փոքր երեխաներ, երբեմն նաև ծծկերներ, հաստատված է բոլոր նրանց վկայություններով, ովքեր չեն կորցրել արդարություն և անաչառություն զգացումը»²¹:

Իր ռազմաթիվ ընդհանրություններում և հոգեվածներում («Վարդան Մամիկոնյանի մահը», «Հայ կալանավորի խոհերը», «Հայկական նոր պոեզիայի վերջին մոտիվներին», «Ինչ է որոնում այսօր ոուս ընթերցողը Հայ դրականության մեջ», «Րաֆֆին որպես լավագույն օրերի նախակարգապետ» և այլն) Յու. Վեսելովսկին ոչ միայն դատապարտում էր ցեղասպանության թուրքական քաղաքականությունը, արտահայտում իր ջերմ սերը դեպի Հայ ժողովուրդը, այլև հաստատ հույս հայտնում, որ քաղաքակրթության և արժանապատիվ հերոսների կրկիբը ի վերջո կգտնի իր ազատությունը²²:

Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը յուրօրինակ անգրադարձ են գտել Սերգեյ Գորոդեցկու ստեղծագործության մեջ, անդրադարձ լայնամասշտաբ և ընդգրկուն: Նրա «Այգի», «Ո՛ւր են նրանք», «Վան», «Աղջկա ձեռքերը», «Խելահեղը», «Հողահանդիստ», «Հրաժեշտ», «Հովհաննես Թումանյանին», «Դրախտի երգեր» և այլ ընդհանրություններում²³ թուրքերի գազանությունների նկատմամբ ատելությունը պոռթկում է բանաստեղծի հոգու խորքերից: Նրա տողերում զգում և տեսնում ես բնագրով առաջնորդվող թուրք գազանների սմբակների հետքերը բազմաչարչար Հայկական հողի, մեռած կամ մեռնող քաղաքների ու գյուղերի համապատկերներում, ճանապարհների փոշին ու տոթը կարծես ջրի տեղ «կլանող», խորունկ թախիծն աչքերում և անամոքելի վիշտը սրտերում, անվերջ երթի մահվան քարավաններում, վայրենաբար սպանված Հայ մանուկի և վերապարածից հոգեկանը խաթարված կնոջ կերպարներում: Գորոդեցկի բանաստեղծը, սակայն, միշտ չէ, որ հակված է վիշտ «պարգևել» իր ընթերցողին: Մեծ հումանիստը հավատում է Հայ ժողովրդի կենսական ուժին, նրա վերածննդին, որոնց վկայությունն են «Հայաստան» և «Հայաստանի սոխակը» լավատեսական բանաստեղծությունները:

Ողբերգական Հայ իրականությունը շատ ծանր են վերապրել նաև այլ ոուս գրողներ, բանաստեղծներ, որոնք իրենց ստեղծագործություններում

21 Տե՛ս նույն տեղում, 1917, N 39-40, c. 4-5.

22 Տե՛ս նույն տեղում, 1916, N 3, 4, 11, 12, 13, 40:

23 Տե՛ս նույն տեղում, N 14, 21, 25:

պատկերել են արևմտահայոսության Գողգոթան, ավերված ու ամայացված Հայ Հայրենիքի սրտակեղեք տեսարանները: Դրանցից են Ալեքսանդր Կոչլյուրի «Վանի գաղել», «Ավերված Վանը», Սերգեյ Ջարովի «Հայ եղբայրներին», «Մի լացիր աշուղ», «Քեռու մահը», «Խավարից», Սերգեյ Պիրվերգիևի «Միայն աղոթք», «Հայաստան», Ն. Նեմիրովիչ-Դանչենկոյի «Փոքրիկ պոեմները», «Եփրատի ափին», «Ինչի՞ համար», Ա. Կուլբեյակինի «Կուլյը», Վ. Դոնինայի «Մարգկային վշտի տողեր», Յու. Վերխովսկու «Հովհաննես Թումանյանին», Եկատերինա Ալեքսեևայի «Աշուղի երգը», Սերգեյ Կրոտկիի «Հանուն Հայրենիքի երջանկության», «Հայուհու օրորոցային երգը», «Ողջույն Հայաստանին», Վալերի Յադլիցկու «Հայ կամավորներին», Կ. Սայանսկու «Հայաստան»²⁴, Վ. Օպոչինինի «Ուղեկցորդը»²⁵ և այլն: «Ուղեկցորդը» բանաստեղծության մեջ Օպոչինինը ցույց է տալիս Հայ մարդուն դարեր ուղեկցող բարոյությունն ու մարդասիրությունը, մարդ, որ կարող է ընկերակցել, անկեղծ բարեկամանալ ցանկացած այլերկրացու հետ, եթե վերջինս իր աշխարհն է եկել ոչ որպես թշնամի:

«Армянский вестник» շաբաթաթերթը և «Армяне и война» ամսագիրը տպագրել են ոչ միայն ռուս գրողների ստեղծագործությունները, այլև Հայ պոեզիայից նրանց կատարած թարգմանությունները: Նարեկացուց, Ֆրիկից, Սայաթ-Նովայից, Ռ. Պատկանյանից, Ալ. Մատուրյանից, Հ. Թումանյանից և այլ Հայ բանաստեղծներից հատկապես բարձրարժեք թարգմանություններ է կատարել Վալերի Բրյուսովը, որի կողմած «Հայ պոեզիայի անթուղիայի» մասին Մինաս Բերբերյանը «Армяне и война» ամսագրի Գրգ համարում գրել է. «Նրան, ինչ մինչև այժմ արված է Արթուր Լեյստի, Արշակ Չոպանյանի, Յու. Վեսելովսկու և մյուսների կողմից Հայ դրականությունը օտար ընթերցողների շրջանում տարածելու գործում ավելացել է նոր, առավել արժեքավոր, տաղանդավոր և սիրով կատարված մի աշխատանք ևս: Ես համոզված եմ, որ «Հայաստանի պոեզիան» կգառնա շատերի սեղանի գիրքը: Այն. անկասկած, կունենա նոր հրատարակություններ»: Հայ մշակույթի և դրականության խորիմացությունը, այդ մշակույթն ու դրականությունն ստեղծող ժողովրդի ապագայի հանդեպ մեծ լավատեսությունը է գրված Վ. Բրյուսովի «Հայաստանի ապագա պոետների խնդիրները»²⁶ հոդվածը: Բրյուսովը դատապարտել է իմպերիալիստական պատերազմը (այն ստեղծեց խոշտանգված Հայաստան), մերկացրել Գերմանիայի քաղաքականությունը, քանի որ այն աջակցում և ոգեշնչում էր արդուհամբույր և երիտթուրքական ոճրագործներին:

«Армянский вестник»-ը և «Армяне и война»-ն իրենց մամուլի տեսություններում նյութեր էին տպագրում ոչ միայն շարունակ-

24 Տե՛ս նույն տեղում, N 6, 8, 20, 21, 24, 25, 26, 34, 35, 42, 46, 47, 48:

25 Տե՛ս Армяне и война, 1916, N 1:

26 Տե՛ս նույն տեղում, N 5:

վող պատերազմի և գրա հետ կապված իրադարձությունների մասին, այլև հարուստ լրատվություն էին ապահովում հայ ժողովրդի կենսունակության, ժամանակակից քաղաքակրթության արժեքներին հաղորդակցել ձգտող նրա անկոտրում ոգու, աշխարհում, Ռուսաստանում տեղի ունեցող արժանահիշատակ իրադարձությունների, դրականության և արվեստի նվաճումների մասին: Մի խոսքով երկու պարբերականներն էլ պատվով են կատարել իրենց դժվար ու պատասխանատու դերը: Նրանք նպաստել են ողբերգություն ապրած ժողովրդի՝ գոյատևման համար պայքարի հանդեպ հավատի ամրապնդմանը, շարունակել են բարենպաստել ողու ժողովրդի հետ համակողմանի կապերի, առաջին հերթին մտավոր և հոգևոր համագործակցության զարգացմանը՝ նոր աստիճանի բարձրացնելով այդ ուղղությամբ հայ պարբերական մամուլի լավագույն ավանդույթները:

ОСВЕЩЕНИЕ АРМЯНО-РУССКИХ ОТНОШЕНИЙ, АРМЯНСКОГО ВОПРОСА И ГЕНОЦИДА АРМЯН В ИЗДАНИЯХ “АРМЯНСКИЙ ВЕСТНИК” И “АРМЯНЕ И ВОЙНА”

Доктор истор. наук Н. Б. САРУХАНИЯН

Резюме

Геноцид западных армян, организованный в 1915–1916 годах в Турции младотурками, вызвал широкую волну протеста и справедливого гнева передовой интеллигенции многих стран. Свой голос протеста против турок подняли многие русские ученые, литераторы, писатели, представители общественно-политической мысли. В годы Первой мировой войны, с целью оказания помощи армянским беженцам, информирования общественности России о судьбах армян было организовано издание еженедельника “Армянский вестник” (1916–1918 гг.) в Москве и ежемесячного журнала “Армяне и война” (1916–1917 гг.) в Одессе. На страницах еженедельника и ежемесячника публиковались разнообразные материалы-статьи, исследования, художественные произведения, переводы, корреспонденции видных представителей русской и армянской общественности (Ю. Веселовский, В. Брюсов, С. Котляревский, П. Долгоруков, Ал. Дживелегов, В. Немирович-Данченко, С. Городецкий, В. Тотемянц, Лео, Т. Ахумян, Гев. Чубар, Гр. Чалхушян, А. Цатурян, Ав. Агаронян, М. Варандян, М. Шагинян и другие), которые освещали общественно-политическую жизнь армянского народа, раскрывали суть политики турецкого правительства в Турецкой Армении, положение беженцев. Особое место уделялось Армянскому вопросу, действиям Кавказской армии, армянскому добровольческому движению, вопросам национального самоопределения западных армян. Освобождение западноармянских областей и спасение армян от физического уничтожения было возможно только при помощи и под покровительством России – с этой точки зрения следует оценивать направленность еженедельника “Армянский вестник” и ежемесячника “Армяне и война”.